ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.12.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/187

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝

«Դիավանտ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝

Դ. Առաքելյանի (իրավաբանական անձանց պետական գրանցման վկայական N 03Ա080146)

Ա. Ավանեսյանի (լիազորագիր, տրված՝ 26.12.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.11.2019թ. թիվ 26/26-1/19064-2019 գրությամբ «Դիավանտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 13.11.2019թ. թիվ ՊՆ/02/2454-2019 գրության հիման վրա, 19.11.2019թ. թիվ 26/26-1/19064-2019 գրությամբ նախաձեռնել է «Դիավանտ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

«Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանի 4.3 կետի համաձայն՝ ՍՑ-ԼՕ-2019/214 ընթացակարգի քննությունը սկսվել է սկզբից:

2. «Դիավանտ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Դիավանտ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Դիավանտ» ՍՊԸ-ն 2008թ.-ից իրականացնում է բժշկական, ճառագայթային և էնդոսկոպիկ սարքավորումների ներմուծում, վաճառք, ուսուցում, երաշխիքային և հետերաշխիքային սպասարկում, հանդիսանում է Canon Medical և Pentax Medical ընկերությունների պաշտոնական դիստրիբյուտորն ու պաշտոնական սերվիս ներկայացուցիչը ՀՀ-ում և տարիներ շարունակ պետական գնումների ոլորտում իրականացնում է պատշաճ մատակարարումներ ու սպասարկում, բարեխղճորեն կատարում պայմանագրով ստանձնած պարտականությունները:

Սույն թվականի հոկտեմբերի 18-ին, Ընկերությունը մասնակցելով ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/16» ծածկագրով գնանաշման հարցման ընթացակարգին՝ 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից և սահմանված ժամկետում ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Պարբերաբար այցելելով gnumner.am կայք՝ տեղեկագրում 07.11.2019թ. հրապարակված N4 և N5 արձանագրություններից Ընկերությունը տեղեկացել է, որ Ընկերության հայտը

մերժվել է, քանի որ վերը նշված փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունները չեն շտկվել (որևէ փաստաթուղթ չի ներկայացվել):

Ընկերությունը հայտնում է, որ info@armeps.am էլ. փոստից Ընկերության diavanttender@gmail.com էլ. փոստին ուղարկված ոչ ավտոմատ ծանուցումները Ընկերությունը չի ստացել: Նույն ժամանակահատվածում՝ 05.11.2019թ.-ին Առողջապահության նախարարության կողմից Ընկերության մյուս՝ lawyer@diavant.am էլ. փոստին ստացվել է ծանուցում, որ Armeps համակարգի միջոցով ուղարկված ոչ ավտոմատ ծանուցումը ոչ բոլոր մասնակիցներն են ստացել (կից՝ նկարը /screenshot/), ուստի կարելի է ենթադրել, որ ծանուցումների հետ կապված խնդիրներ են եղել:

Քանի որ վերոնշյալ խնդիրը ծագել է կապի և հեռահաղորդակցության միջոցների խափանման և/կամ մարդկային գործոնի միջամտությունից անկախ պայմաններում, և Ընկերությունը չի հետապնդել որևէ դիտավորություն շտկում կատարելուց խուսափելու համար, ինչպես նաև կարևորելով այն հանգամանքը, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքը և այն կարգավորող իրավական ակտերը վերոնշյալ դեպքերի համար չեն նախատեսում որևէ կարգավորում, Ընկերությունը գտնում է, որ նշված պայմաններում փաստթղթեր չներկայացնելը չի կարող համարվել գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Ընկերությունը խնդրել է վերջինիս չվերագրել ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, և վերջինիս չներառել գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Դիավանտ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/187 ընթացակարգի շրջանակներում 27.12.2019թ. ժամը 11:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 13.11.2019թ. թիվ ՊՆ/02/2454-2019 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ՊՆ կարիքների համար

կազմակերպված «Բժշկական սարքերի» գնման «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (հետայսու նաև՝ Ընթացակարգ) հայտ էին ներկայացրել թվով 4 մասնակիցներ, այդ թվում՝ «Դիավանտ» ՍՊԸ-ն:

«Դիավանտ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվեց առաջին տեղ զբաղեցնող մասնակից: 25.10.2019թ. սահմանված կարգով համակարգի (armeps.am) միջոցով ծանուցվեց առաջին տեղ զբաղեցնող մասնակցին՝ ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Մասնակիցը սահմանված ժամկետում և կարգով ներկայացրեց ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված որակավորման փաստաթղթերը: Ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում հանձնաժողովը պարզեց, որ «Դիավանտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը 01.11.2019թ. կայացած նիստում որոշեց երեք աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել առկա անհամապատասխանությունը:

Սահմանված ժամկետի ավարտից հետո գնահատող հանձնաժողովի ուսումնասիրությամբ պարզվեց, որ «Դիավանտ» ՍՊԸ-ի կողմից ծանուցմամբ արձանագրված անհամապատասխանությունը չի շտկվել՝ որևէ փաստաթուղթ չներկայացվեց (մանրամասն տեղեկությունները ներառված են կից ներկայացվող հանձնաժողովի նիստերի արձանագրություններում):

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 48-րդ կետի 2-րդ ենթակետը՝ հանձնաժողովը որոշեց «Դիավանտ» ՍՊԸ-ի հայտը մերժել, միաժամանակ, մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/187 ընթացակարգի շրջանակներում 27.12.2019թ. ժամը 11:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/187 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/187 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Դիավանտ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.10.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Դիավանտ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է հրավերով նախատեսված փաստաթղթերը սահմանված ժամկետում ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.11.2019թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Դիավանտ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում չեն շտկվել հայտում արձանագրված անհամապատասխանությունները:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 19.11.2019թ. թիվ 26/26-1/19064-2019 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 13.11.2019թ. թիվ ՊՆ/02/2454-2019 գրությունը և կից փաստաթղթերը, «Դիավանտ» ՍՊԸ-ի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ

և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխա-նության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում՝ բացառությամբ մասնակցի կողմից գնային առաջարկի և հայտի ապահովման ներկայացման դեպքերի:

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Դիավանտ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.10.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Դիավանտ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է հրավերով նախատեսված փաստաթղթերը սահմանված ժամկետում ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.11.2019թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Դիավանտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Ֆիբրոգաստրոսկոպ լույսի աղբյուրով» ապրանքատեսակի ամբողջական նկարագրում Տեսադաշտի անկյունը նշված է 100^0, մինչդեռ Ընթացակարգի հրավերով պահանջվել է Տեսադաշտի անկյունը առնվազն 105^0:

Նույն արձանագրության համաձայն՝ որոշվել է նիստը կասեցնել և ծանուցել Ընկերությանն երեք աշխատանքային օրյա ժամկետում անհամապատասխանությունը շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընկերությանը ծանուցումն ուղարկվել է 01.11.2019թ. Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.11.2019թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Դիավանտ» ՍՊԸ-ն հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում չեն շտկվել հայտում արձանագրված անհամապատասխանությունները (ոչ մի փաստաթուղթ չի ներկայացվել):

Այսպիսով՝ հրավերով սահմանվել է, որ հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի համապատասխանությունը սույն հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ պարտադիր և մանրամասն նկարագրվում

են ապրանի ամբողջական նկարագրում սույն հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունները:

Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված՝ Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7.13-րդ կետի 4-րդ ենթակետով պահանջվող փաստաթղթերի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու, ինչպես նաև առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ընկերությունը հայտնել է, որ իր կողմից չեն ստացվել Ընկերության «diavanttender@gmail.com» էլ. փոստին ուղարկված ոչ ավտոմատ ծանուցումները:

Այս տեսանկյունից ՀՀ ֆինանսների նախարարությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված համապատասխան գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից «Դիավանտ» ՍՊԸ-ի Armeps համակարգում գրանցած «diavanttender@gmail.com» էլեկտրոնային փոստի հասցեով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով 25.10.2019- 13.11.2019թթ. ընկած ժամանակահատվածում, այդ թվում նաև **01.11.2019թ. ժամը 15:26-ին, 01.11.2019թ. ժամը 15:37-ին** ուղարկվել են էլեկտրոնային ուղերձ նամակներ (կցվել են):

Նույն գրության համաձայն՝ մասնակցին ուղարկվող ոչ ավտոմատ ծանուցումների ետ վերադարձի մասին հաղորդագրություն համակարգում առկա չէ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ ֆինանսների նախարարության վերոհիշյալ գրության մեջ նշված 01.11.2019թ. ժամը 15:26-ին, 01.11.2019թ. ժամը 15:37-ին ուղարկված ուղերձ նամակները հանդիսացել են «Դիավանտ» ՍՊԸ-ին ուղղված՝ Կարգի 41-րդ կետով նախատեսված ծանուցումը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.11.2019թ. նիստի թիվ 4 արձանագրությունը, որում նույնպես նկարագրվել են Ընկերության կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում արձանագրված անհամապատասխանությունները:

Միևնույն ժամանակ «Դիավանտ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է «Սայբեր Գեյթս» ՍՊԸ-ի կողմից տրամադրված մասնագիտական

եզրակացությունը, որի համաձայն՝ ուսումնասիրությունների արդյունքում փորձագետը հանգեց հետևյալ հետևությունների՝

Առաջին էլ. փոստից (info@armeps.am) երկրորդ էլ. փոստին («diavanttender@gmail.com») (ենթադրաբար ս.թ. նոյեմբերի 1-ից մինչև 8-ը ընկած ժամանակահատվածում) ավտոմատ կամ ոչ ավտոմատ էլեկտրոնային նամակների փոխանցման ընթացքում առաջացած հավանական տեխնիկական խնդրի (ների) պատճառն առաջին էլ. փոստի թերի (ոչ լիարժեք) կարգավորումներն են, որոնց արդյունքում վերոհիշյալ նամակները հայտնվել են երկրորդ էլ. փոստի «անցանկալի» (SPAM) նամակների պանակում և ավտոմատ կերպով հեռացվել վերջիններիս վաղեմության ժամկետն երեսուն օր լրանալուց հետո:

Ուսումնասիրելով «Սայբեր Գեյթս» ՍՊԸ-ի կողմից տրամադրված մասնագիտական եզրակացությունը, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված վերահիշյալ պարզաբանումը՝ կից փաստաթղթերով, այնուամենայնիվ արձանագրում եմ, որ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված Armeps համակարգի համապատասխան քաղվածքների, էլեկտրոնային ուղերձ-նամակների՝ 01.11.2019թ. Ընկերությանն ուղարկվել է Կարգի 47-րդ կետով նախատեսված ծանուցումը:

Այսպիսով՝ Ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 4-րդ կետի 4.3 ենթակետով սահմանվել է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովին է ներկայացնում ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընկերությունը հայտի թիվ 1.1 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/16» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով նույն դիմում- հայտարարությունում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին և պարտավորվում է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու

դեպքում հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Տվյալ դեպքում արձանագրում եմ, որ «Դիավանտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանել Ընթացակարգի հրավերի պահանջներին, որը չի շտկվել նաև Կարգի 47-րդ կետի համաձայն ծանուցվելուց հետո:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում՝ բացառությամբ մասնակցի կողմից գնային առաջարկի և հայտի ապահովման ներկայացման դեպքերի:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Դիավանտ» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/16» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում, ուստի առկա են Ընկերությունը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.11.2019թ. թիվ 26/26-1/19064-2019 գրությամբ «Դիավանտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Դիավանտ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**